

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ի՞նչ պիտի արժէր պաշտօնաթերթ մը կամ պարզ թերթ մը, եթէ անոնք ունին աշխատակիցներ, բայց չունին բաւարար ընթերցողներ, որովհետեւ եթէ անոր աշխատակիցները տուեալ թերթին կու տան կեանք, նկարագիր եւ արժէք, անդին՝ ընթերցողը աղբիւրն է անոր նիւթական ապահովութեան, լոյս ընծայման եւ բարեկեցութեան: Դժբախտաբար մեր ժողովուրդի պարագային մեր թերթերու բաժանորդները, շատ հազուագիւտ բացառութեամբ, ատենին կը վճարեն իրենց բաժանորդագիրները, բան մը որ կը զրկէ տուեալ թերթին աշխատակիցները իրենց արժանի վարձատրութենէն, եւ այս բնական է որ անուղղակիօրէն իր անդրադարձը ունենայ թերթին բովանդակութեան վրայ, որ պիտի ազդէ ընթերցողներու թիւին, եւ այդ ալ իր կարգին, ժամանակի ընթացքին պիտի բերէ տխուր վախճանը այդ նոյն թերթին:

Այս օրերուն, արտասահմանի մէջ ամէն հայ պահանջատէր է, բայց ոչ ոք պատասխանատու, այն աստիճան, որ մեծամասնութիւնը մեր թերթերուն էջերը կը լեցնեն պատահական եւ երբեմն նոյնիսկ անիմաստ յօդուածներով, արտատպումներով եւ թարգմանութիւններով, պարզապէս իրենց գոյութիւնը հաստատելու եւ կամ քաշքշելու համար:

Աշխարհի օրէնքն է այս, ինչպէս մարդիկ կը ծնին ու կը մեռնին, նոյնպէս նաեւ թերթեր կը ծնին, կ'ապրին եւ կը մեռնին: Ու այս մեզ կը հասցնէ այն եզրակացութեան, որ Հայը իբր Հայ ապրելու համար պարտի ապրեցնել նաեւ ո՛չ միայն Հայ թերթը, այլ նաեւ, եւ աւելիով՝ Հայ դպրոցը, որուն ճակատագիրը դժբախտաբար այս օրերուն կ'որոշեն Բարեգործականի այլասեռած ղեկավարները, որոնց ձեռքին Հայ դպրոցը այլեւս դարձած է ճատրակի քար մը: Վերջերս Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը տխուր ու ցաւալի ստիպողականութեան տակ գտնուեցաւ փակելու միանգամընդմիշտ Յորդանանի Ամմանի Իզպաշեան հայկական նախակրթարանը, որուն բարերանները՝ Իզպաշեան եւ Բարեգործական, մի քանի տարիներէ ի վեր դադրած էին հոգալու ծախսերը, բան մը որ ծանր բեռ դարձած էր Պատրիարքութեանս վրայ, իսկ միւս կողմէն Ամմանահայեր կը նախընտրէին իրենց զաւակները զրկել օտար դպրոցներ: Պատրիարքութիւնը յանձնառու էր դպրոցը բաց պահել եթէ Ամմանի հայութիւնը կարենար առնուազն եօթանասուն եւ հինգ աշակերտ տալ դպրոցին, սակայն արդիւնքը եղաւ միայն ԵՐԵՍՈՒՆ եւ ՀԻՆԳ աշակերտ, բան մը որ չափազանց սուղ եւ ծանր պիտի արժէր Պատրիարքութեանս: Անշուշտ Բարեգործականի արկածախնդրութիւնը պիտի չվերջանար Ամմանահայ գաղութին փոքրիկ դպրոցով, քանի ան արդէն սկսած էր իր արկածախնդրութեանց Սուրիոյ, Լիբանանի եւ ի վերջոյ Գալիֆորնիոյ Հայկական դպրոցներու եւ Մելքոնեան հաստատութեան փակումով, այն միակ եւ խղճուկ արդարացումով, թէ «Երեւան պիտի նոր բարեգործական դպրոց մը բանան», տա՛յ Աստուած:

Եթէ կ'ուզենք ապրել իբր իրաւ Հայ, պարտինք ապրեցնել նաեւ Հայ դպրոցը իր հայկական նկարագրով, այժմէացնել՝ բայց երբեք չեղծանիլ անոր իսկական եւ հարգատ նկարագիրը: